# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«18» ապրիլի 2014 թվականի N 47 –Ա**

## ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հինք ընդունելով Գյումրու զինկոմիսարիատի ներկայացրած ցուցակները (քաղաքապետարանում մուտքագրված 2014 թվականի ապրիլի 08-ին N Գ 2579 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Արցախյան պատերազմում (1991-1994թթ.) զոհված՝ թվով 105 ազատամարտիկների ընտանիքներին՝ ցուցակը համաձայն հավելված N1 - ի , կանխիկ տրամադրել յուրաքանչյուրին 20000 -ական Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը 2 100 000 (երկու միլիոն մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Զոհված (մահացած) թվով 150 զինծառայողների ընտանիքներին՝ ցուցակը համաձայն հավելված N2- ի, կանխիկ տրամադրել յուրաքանչյուրին 20000-ական Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը 3 000 000 ( երեք միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ՝ թվով 17 ազատամարտիկներին՝ ցուցակը համաձայն հավելվածի N3 - ի, կանխիկ տրամադրել յուրաքանչյուրին 15000 -ական Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը 255 000 (երկու հարյուր հիսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

4.2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ՝ թվով 237 ազատամարտիկներին՝ ցուցակը համաձայն հավելված N4-ի, կանխիկ տրամադրել յուրաքանչյուրին 10000 -ական Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը 2 370 000 (երկու միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

5.Գյումրի քաղաքի Հայրենական Մեծ պատերազմի մասնակից՝ թվով 76 վետերաններին՝ ցուցակը համաձայն հավելված N5 – ի, կանխիկ տրամադրել յուրաքանչյուրին 15000 -ական ՀՀ դրամ, ընդամենը 1 140 000 ( մեկ միլիոն հարյուր քառասուն հազար ) Հայաստանի Հանրապետության դրամ:

6.1956 թ հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից՝ թվով 37 վետերաններին՝ ցուցակը համաձայն հավելվածի N6 - ի, կանխիկ տրամադրել յուրաքանչյուրին 15000 -ական Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը 555 000 (հինգ հարյուր հիսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

7. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին կատարել համապատասխան հատկացումները Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

**Կողմ (16)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Ա.Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____